Տպագրված է ընդամենը 6 օրինակ
ՕՐԻՆԱԿ N _____

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց Պետական
Ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
Գրանցման թիվ 211.150.04865
Գրանցման օրը 22.09. 2010թ.
Վկայական N 03 Ա 082570
Թիվ_____ փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական
Ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի
Կողմից __ __ 2010**թ.**

Տարածքային բաժնի պետ
Հ.Խուդգարյան__/_____/

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
վարկային կազմակերպությունների
միություն
իրավաբանական անձանց միության
անդամների ընդհանուր ժողովի
որոշմամբ
արձանագրություն N 02

10 մարտի 2010թ.

գործադիր տնօրեն՝

Մ.Եսայան /_____/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
նոր խմբագրությամբ

ԵՐԵՎԱՆ 2010

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների միություն իրավաբանական անձանց միությունը (հետագայում՝ «Միություն») հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող վարկային կազմակերպությունների (առևտրային կազմակերպությունների) կամավոր միավորում:

1.2. Միությունը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային իրավաբանական անձ, ունի առանձնացված գույք, կարող է իր անունից ձեռք բերել գույքայինևանձնական ոչ գույքային իրավունքներևկրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Միությունը իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության բանկերում և օտարերկրյա պետությունների բանկերում: Միությունը ունի՝ ինքնուրույն հաշվեկշիռ, անվանման հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմակնիք, իր անվանումով ձևաթղթերևայլ տեսողական նույնականացման միջոցներ:

1.3. Միությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար կարող է հիմնադրել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

1.4. Միությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար, իսկ անդամները սույն Կանոնադրությամբ սահմանված չափովևկարգով սուբսիդիար պատասխանատվություն են կրում Միության պարտավորությունների համար:

1.5. Միությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, իր անդամների Ընդհանուր ժողովիևԽորհրդի որոշումներով:

1.6. Միության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոմիտասի պ. 54 թիվ 150:

1.7. Միության անվանումն է՝

հայերեն

Հայաստանի Հանրապետության վարկային կազմակերպությունների միություն

կրճատ՝ ՀՀ ՎԿՄ

անգլերեն

լրիվ՝ _Union of Credit Organizations of the Republic of Armenia_

կրճատ՝ UCORA

ռուսերեն

լրիվ՝ Союз кредитных организации Республики Армении

կրճատ՝ СКОРА

2. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Միության առաքելությունն է նպաստել ՀՀ ֆինանսավարկային համակարգի զարգացմանը՝ վարկային կազմակերպությունների ներուժի առավել ամբողջական և արդյունավետ կիրառման միջոցով:

2.2. Միության հիմնական խնդիրը՝ իր անդամների ընդհանուր խնդիրներն ու շահերը ՀՀ կենտրոնական բանկում, ՀՀ կառավարությունում և պետական ու ոչ պետական այլ մարմիններում ներկայացնելն է:

2.3. Միության խնդիրներն են՝

- բացահայտել, հետազոտել ու ընդհանրացնել իր անդամների շահերի հետ առնչվող հիմնախնդիրները, խոչընդոտներն ու ռիսկերըև համապատասխան գործողությունների նախաձեռնումը՝ դրանք լուծելու ուղղությամբ,
- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը ՀՀ կենտրոնական բանկում, այդ նպատակով կազմակերպել համատեղ քննարկումներ, հանդես գալ առաջարկություններով,
- նպաստել Միության անդամների կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց փորձաքննությանը,
- Միության անդամներին օժանդակել ֆինանսավարկային առաջավոր տեխնոլոգիաների ու մեթոդների ներդրմանը՝ սպասարկման բարելավման և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
- մշակելևիրականացնել ծրագրեր՝ կադրերի վերապատրաստմանևորակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և սույն Կանոնադրությանը:

3. ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Միությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ պետական գրանցման պահից:

3.2. Միությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

3.3. Միությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, նպատակները, խնդիրներընգործունեության ձևերը:

3.4. Միությունն, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, իրավունք ունի՝

- ունենալ գործադիր մարմիններքին կառուցվածքային ստորաբաժանումներ,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ ստանալ դրամաշնորհներ,
- կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և գործարքներ,
- հանդես գալ պետականնտեղական ինքնակառավարման մարմիններում, տնտեսական և հասարակական կառույցներում, միջազգային կազմակերպություններում, լինել հայցվոր կամ պատասխանող դատարանում,
- ներկայացնելնպաշտպանել իր անդամների գույքայինևոչ գույքային իրավունքները, օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններումևայլ կազմակերպություններում ու ատյաններում,
- կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական Միությունների հետ, անդամակցել միջազգային ոչ առևտրային կազմակերպությունների,
- իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով իր անդամներին և երրորդ անձանց մատուցել խորհրդատվական և Միության անդամների շահերից բխող այլ ծառայություններ,
- ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար հիմնադրել ընկերություններ կամ լինել դրանց մասնակից,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնադրել լրատվության միջոցներ,
- օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով (այդ թվում՝ նաև անհատույց) օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,
- օտարել կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել Միությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք:

3.5. Միությունն իրավունք ունի իրականացնել իր կանոնադրությանը չհակասող և օրենքով չարգելված այլ գործունեություն:

3.6. Միությունը պարտավոր է՝

- իր անդամների համար Միության գործունեությանը մասնակցության հավասար հնարավորություններ ապահովել,
- կրել օրենսդրությամբևայլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

3.7. Միությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.8. Պետական մարմիններիևպաշտոնատար անձանց կողմից Միության գործունեությանը միջամտելն արգելվում է՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

4. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Միության անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող յուրաքանչյուր վարկային կազմակերպություն, որը՝

- ընդունում է Միության կանոնադրությունը, նրա նպատակներն ու խնդիրները, մուծում է մուտքի վճար և անդամավճար,
- պատրաստակամ է նպաստել Միության համբավի ու հեղինակության աճին,
- ցանկանում է մասնակցել Միության գործունեությանը՝ կրելով օրենսդրությամբ, Միության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված պարտականությունները և ստանձնելով համապատասխան իրավունքներ:

4.2. Միությանը անդամակցության հարցը քննարկում է Միության հերթական կամ արտահերթ ընդհանուր ժողովը: Քննարկմանը կարող է մասնակցել նաև դիմող վարկային կազմակերպության խորհրդի նախագահը կամ գործադիր տնօրենը: Միության նախագահի ստորագրությամբ Ընդհանուր ժողովի որոշումը եռօրյա ժամկետում պաշտոնապես տրամադրվում է դիմողին:

4.3. Միության անդամի իրավունքները դադարում են Ընդհանուր ժողովի որոշմամբ, բացառությամբ սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

4.4. Միության անդամը Միության կազմից կարող է դուրս գալ իր դիմումի համաձայն՝ դուրս եկող անդամի ու Միության միջև փոխադարձ պարտավորությունները ճշտելուց և կատարելուց հետո:

4.5. Միության անդամը կարող է հեռացվել Միությունից սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Միությունից հեռացված անդամի նկատմամբ կիրառվում են Միությունից դուրս գալուն վերաբերող կանոնները:

4.6. Միության անդամը կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել Միությունից հետևյալ դեպքերում՝

- Միության անդամի կողմից խախտվել է սույն Կանոնադրության դրույթները,
- Միության անդամը չի կատարել Միության ընդհանուր ժողովի և/կամ խորհրդի որոշումները:

4.7. Միության անդամի սնանկության դեպքում, դատարանի որոշումը ուժի մեջ մտնելու պահից նրա անդամակցությունը դադարում է:

4.8. Միության անդամի լուծարման դեպքում, լուծարման կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից նրա անդամակցությունը դադարում է:

5. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Միության անդամն իրավունք ունի՝

- մեկ ձայնի իրավունքով մասնակցել Միության ընդհանուր ժողովինխորհրդի նիստերի աշխատանքներին: Ընդ որում՝ Միության ընդհանուր ժողովինխորհրդի նիստերին անդամների խորհրդի նախագահներն ու գործադիր տնօրենները մասնակցում են առանց լիազորագրի, իսկ վերջիններիս ներկայացուցիչները՝ լիազորագրերով,
- ընտրել և ընտրվել Միության կառավարման բարձրագույն և այլ մարմիններում,
- Միության ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, գանգատներ և առաջարկություններ,
- սպառիչ տեղեկատվություն ստանալ Միության գործունեության մասին,
- դուրս գալ Միությունից,
- Միությունից ստանալ իրավական և խորհրդատվական օգնություն՝ իր օրինական շահերի պաշտպանության համար,
- մասնակցել Միության կողմից կազմակերպված բոլոր միջոցառումներին:

Միության անդամը պարտավոր է՝
- բարեխղճորեն կատարել սույն Կանոնադրությամբ սահմանված պարտավորություններն ու պահանջները և Միության կառավարման մարմինների որոշումները,
- հոգ տանել Միության համբավի ու հեղինակության բարձրացման համար,
- սույն Կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով, չափով ու ժամկետներում վճարել անդամավճարները,
- օժանդակել Միությանը նրա Կանոնադրական խնդիրների իրականացման գործում:

6. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Միության կառավարման մարմիններն են՝
1) Միության անդամների ընդհանուր ժողովը (տեքստում՝ Ընդհանուր ժողով),
2) Միության խորհուրդը (տեքստում՝ Խորհուրդ), եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ այն ձևավորվում է,
3) Միության գործադիր տնօրենը:

<u>Ընդհանուր ժողով</u>

6.2. Միության կառավարման բարձրագույն մարմինը Միության անդամների ընդհանուր ժողովն է: Ընդհանուր ժողովի իրավասությունները սահմանվում են օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:

6.3. Ընդհանուր ժողովը հրավիրվում է Խորհրդի կողմից՝ առնվազն տարին երկու անգամ: Միության խորհրդի բացակայության (չձևավորման) դեպքում Ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել ավելի հաճախակի:

6.4. Միության արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր տնօրենի, վերստուգիչ հանձնաժողովի, Միության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի կամ Միության անդամների առնվազն մեկ հինգերորդի պահանջով: Արտահերթ ժողովը գումարվում է պահանջը ներկայացնելու օրվանից՝ 15 օրվա ընթացքում:

6.5. Ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը, անցկացման տեղը, կարգն ու ժամկետները սահմանում է Խորհուրդը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Միության նախագահը և գործադիր տնօրենը համատեղ: Ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը բաժանվում է անդամներին՝ ժողովից առնվազն 7 օր առաջ:

6.6. Ընդհանուր ժողովը իրավասու է որոշում կայացնել Միության գործունեությանը վերաբերող և սույն Կանոնադրության էությունից բխող ցանկացած հարցի վերաբերյալ:

6.7. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- Միության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- Միության խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Միության նախագահի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Միության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- Միության հաստիքացուցակի և դրույքաչափերի հաստատումը,
- Միության ակտիվների արժեքի 50 տոկոսը գերազանցող գործարքների հաստատումը,
- Միության գործադիր տնօրենի նշանակումը և նրա հետ կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծումը,
- Միության անդամների կողմից մուտքի վճարների և անդամավճարների մուծման կարգի և չափերի հաստատումը,
- Միությանը վարկային կազմակերպությունների անդամակցությանևանդամության դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը,
- Միության վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Միության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
- Միության տարեկան հաշվետվություններիևհաշվապահական հաշվեկշռի հաստատումը: Դրանց հաստատումը կատարվում է միայն վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության դեպքում,
- Միության վերակազմակերպումը և լուծարումը, լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը:

6.8. Ընդհանուր ժողովում Միության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ընդհանուր ժողովը իրավունակ է, եթե ժողովին մասնակցում է Միության անդամների առնվազն երկու երրորդը: Ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են ժողովին մասնակցողևքվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների երեք քառորդով, բացառությամբ Միության լուծարմանն ու վերակազմավորմանը վերաբերող հարցերի: Միության լուծարման ու վերակազմավորման որոշումը ընդունվում է Միության բոլոր անդամների ձայների երեք քառորդով:

6.9. Ընդհանուր ժողովում որոշման կայացման համար բավարար ձայների բացակայության դեպքում քննարկվող հարցը օրակարգից հանվում է:

6.10. Ընդհանուր ժողովում հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Միության գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Միության գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

6.11. Ընդհանուր ժողովում նախագահում է Միության նախագահը, նրա բացակայության դեպքում՝ ընդհանուր ժողովի որոշմամբ այլ անդամ: Ժողովի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է ժողովի արձանագրություն երկու օրինակից, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը:

<u>Խորհուրդ</u>

6.12. Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ձևավորվել Միության խորհուրդ: Խորհրդի բացակայության դեպքում սույն Կանոնադրությամբ սահմանված Խորհրդի լիազորություններն իրացնում է Ընդհանուր ժողովը:

6.13. Խորհուրդը իրականացնում է Միության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն Կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

6.14. Միության խորհուրդը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով: Խորհուրդը ընտրվում է Միության անդամների գործադիր տնօրեններից կամ խորհրդի նախագահներից:

6.15. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է առնվազն երեք անդամից:

6.16.Խորհուրդն իր աշխատանքները իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են

Խորհրդի նախագահի կողմից: Միության խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի, վերստուգիչ հանձնաժողովի, գործադիր տնօրենի, Միության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձի պահանջով հրավիրվում են արտահերթ նիստեր: Արտահերթ նիստը գումարվում է պահանջը ներկայացնելու օրվանից՝ 10 օրվա ընթացքում:

6.17. Խորհրդի իրավասություններն են՝

- Միության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, դրանց օրակարգի նախագծի հաստատումը,
- Ընդհանուր ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- Միության գործադիր տնօրենի թեկնածուի (թեկնածուների) առաջարկումը,
- Միության գործադիր տնօրենի վարձատրության չափի որոշումը,
- այլ միությունների ստեղծումը կամ այդ միություններին անդամակցությունը,
- ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- Միության անդամներին վճարովի ծառայություններ մատուցելու կարգի և պայմանների հաստատումը,

- Միության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների (գործարքի կատարման պահին Միության ակտիվների 25 տոկոսը գերազանցող գումարի) կնքումը,
- Միության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- Միության զարգացման ծրագրերի և գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերի հաստատումը,
- Միության գործունեության արդյունքների մասին գործադիր տնօրենի հաշվետվության հաստատումը,
- սույն Կանոնադրության էությունից բխող և Ընդհանուր ժողովի կողմից տրված այլ իրավասությունների իրականացումը:

6.18. Խորհրդում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի նիստը իրավասու է որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում է Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի նիստերում հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Միության գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհուրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

6.19. Միության խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում քննարկվող հարցը օրակարգից հանվում է:

6.20. Խորհրդի նիստի գումարման մասին անդամները ծանուցվում են գրավոր կամ էլեկտրոնային ձևով՝ Խորհրդի նիստի գումարման օրվանից առնվազն 7 օր առաջ: Ծանուցումը ուղարկվում է Խորհրդի նախագահի կողմից անձամբ կամ նրա գրավոր հանձնարարությամբ՝ գործադիր տնօրենի կողմից:

6.21. Խորհրդի անդամները չեն վարձատրվում:

6.22. Խորհրդի նիստը նախագահում է Միության նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից տարեց անդամը: Խորհրդի նիստի ավարտից հետո եռօրյա ժամկետում կազմվում է նիստի արձանագրությունը, որը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները:

<u>Միության նախագահ</u>

6.23. ՀՀ ՎԿՄ նախագահը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող և քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների երկու երրորդով, ընդ որում Միության նախագահի պաշտոնավարումը կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ երկարաձգվել ևս մեկ տարի: Նախագահի ընտրության ձևը (բաց կամ փակ ընտրություն) որոշվում է Ընդհանուր ժողովի կողմից քվեարկությամբ: Նույն անձը պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո (ներառյալ երկարաձգման ժամկետը) չի կարող անմիջապես վերընտրվել որպես Միության նախագահ:

Միության նախագահը չի վարձատրվում: Միության ֆինանսական միջոցներից փոխհատուցվում կամ ֆինանսավորվում են Միության

նախագահի կողմից կատարված գործուղման, ներկայացուցչականևայլ ծախսերը, որոնք կապված են Միության հեղինակության բարձրացմանևՄիությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս ներկայացնելու հետ:

6.24. Միության նախագահը՝

- կազմակերպում և համակարգում է Ընդհանուր ժողովի ու Խորհրդի աշխատանքները,
- գումարում և նախագահում է Ընդհանուր ժողովն ու Խորհրդի նիստերը,
- կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը,
- նախագահում է Ընդհանուր ժողովը, ստորագրում է ժողովների արձանագրությունները, պատասխանատվություն է կրում արձանագրություններում առկա տեղեկությունների հավաստիության համար,
- Միության անունից գործադիր տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

6.25. Խորհրդի բացակայության դեպքում Միության նախագահի պարտականությունների մեջ մտնում են նաև՝

- տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, դրանց օրակարգի նախագծի հաստատումը,
- Ընդհանուր ժողովին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

6.26. Միության նախագահը իրավասու է առանց լիազորագրի Միության անունից մասնակցել հրապարակային քննարկումների ու բանակցությունների: Առանց Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի համապատասխան որոշման, Միության նախագահը իրավասու չէ Միության անունից որևէ գործարք կնքել և/կամ գործողություն կատարել:

6.27. Որպես Միության նախագահ հանդես գալու դեպքում, Միության նախագահը չի կարող մատնանշել կամ որևէ այլ կերպ հիշատակել իր կողմից ղեկավարվող վարկային կազմակերպության անվանումը: Նա պարտավոր է հանդես գալ բացառապես Միության շահերից ելնելով:

<u>Միության գործադիր տնօրեն</u>

6.28. Միության միանձնյա գործադիր մարմինը հանդիսանում է գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը նշանակվում է Ընդհանուր ժողովի կողմից: Նա ղեկավարում է Միության ընթացիկ աշխատանքներն ու գործունեությունը:

Միության գործադիր տնօրենը՝

- ներկայացնում է Միության անդամների շահերը օրենսդիր, գործադիր և դատական մարմիններում, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկում, տեղականևմիջազգային կառույցներում, հանդես է գալիս ֆինանսավարկային գործունեության կարգավորումն ու զարգացումը, ինչպես նաև անդամների շահերի պաշտպանությունը ապահովող առաջարկություններով և հայտարարություններով,

- ղեկավարում է Միության ընթացիկ գործունեությունը, բացառությամբ սույն Կանոնադրությամբ սահմանված՝ Ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասությանը պատկանող հարցերի,
- տնօրինում է Միության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Միության անունից,
- ներկայացնում է Միությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- գործում է առանց լիազորագրի,
- տալիս է լիազորագրեր,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Միության ներքին ակտերը,
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Միության աշխատակիցներին, ապահովում աշխատանքային ներքին ակտերի կատարումը,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- բանկերում բացում է հաշիվներ,
- իրականացնում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ:

6.30. Գործադիր տնօրենը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, սույն Կանոնադրությամբ, ԸնդհանուրժողովիևԽորհրդի որոշումներով, Միության ներքին ակտերով, ինչպես նաև իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

6.31. Գործադիր տնօրենը հաշվետու է Միության ընդհանուր ժողովին և խորհրդին:

7. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

7.1. Միության վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով:

7.2. Վերստուգիչ հանձնաժողովը կազմը պետք է 3 անձից պակաս չլինի և ընտրված լինի միայն Միության անդամների աշխատակիցներից, բացառությամբ Միության կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից: Վերստուգիչ հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.3. Վերստուգիչ հանձնաժողովը՝
- իրականացնում է Միության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը՝ հաջորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում,

- ստուգում է Միության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Միության անդամների առնվազն 10 տոկոսի պահանջով,
- ստուգում է Միության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, Կանոնադրությանը, Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշումներին, ներքին ակտերին,
- ստուգման ընթացքում իրավունք ունի պահանջել Միության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է հաշվետվություններ և ներկայացնում Ընդհանուր ժողովին և Խորհրդին,
- Միության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է Ընդհանուր ժողովին:

7.4. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Հանձնաժողովը իրավասու է ընդունել որոշումներ, եթե նիստին մասնակցում են բոլոր անդամները: Վերստուգիչ հանձնաժողովի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5. Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի պահանջել գումարել արտահերթ Ընդհանուր ժողով և/կամ Խորհրդի նիստ:

7.6. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները չեն վարձատրվում:

7.7. Վերստուգիչ հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումներով:

8. ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Միության գույքը հանդիսանում է նրա սեփականությունը:

8.2. Միությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ ու շարժական գույք, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Միության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի:

8.3. Միության միջոցները կարող են օգտագործվել միայն Միության կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրականացման համար: Միության գույքը վերջինիս լուծարման դեպքում օգտագործվում է նրա կանոնադրական նպատակների համապատասխան, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

8.4. Միության սեփական միջոցների գոյացման աղբյուրներն են՝
- Միության անդամների անդամակցությանևամսական անդամավճարները,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակված թերթերի, տեղեկագրերի և այլ նյութերի իրացումից, ինչպես նաև վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները,
- Միության անդամների դրամական և նյութական ներդրումները,
- բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսները,
- դրամական և այլ ձևերով շնորհ ստացված միջոցները,
- բարեգործական ներդրումները, ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև այդպիսի կարգավիճակ չունեցող այլ կազմակերպությունների նվիրատվությունները,
- Միության կողմից հիմնադրված ընկերությունների և այլ ընկերություններում մասնակցություններից ստացված շահաբաժինները և տոկոսները,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքեր և աղբյուրներ:

8.5. Միության սեփական միջոցների գոյացման հիմնական աղբյուրը՝ Միության անդամների անդամակցության և ամսական անդամավճարներն են:

8.6. Միության անդամի անդամակցության վճարը (Մուտքավճար) իրենից ներկայացնում է միանվագ վճար, որը անդամը վճարում է Ընդհանուր ժողովի կողմից անդամակցության վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում՝ երեք բանկային օրվա ընթացքում: Միության նոր անդամը պետք է հատուցի նաև իր անդամակցության գրանցման հետ կապված ծախսերը, եթե այդպիսիք առկա են:

8.7. Միությանը անդամների ամսական անդամավճարի չափը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ սույն Կանոնադրության դրույթների համապատասխան:

8.8. Միության ամսական անդամավճարի նվազագույն սահմանաչափը սահմանվում է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

8.9. Միության անդամները անդամավճարները կարող են վճարել ամսական կամ եռամսյակային կտրվածքով:

8.10. Անդամակցության վճարը կամ ամսական անդամավճարը սույն Կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով, կարգով և ժամկետներում չվճարելու դեպքում Միության անդամը վճարում է տույժ՝ Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափերով:

8.11. Միության անդամը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից անվճարունակ ճանաչվելու դեպքում, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև բնականոն գործունեության անցնելու ամիսը, ամսական անդամավճար չի վճարում:

9. ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Յուրաքանչյուր հաջորդ տարվա համար Միության գործադիր տնօրենը մշակում և Խորհրդի, իսկ դրա բացակայության դեպքում՝ Ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Միության գործունեության գալիք տարվա համալիր ծրագիրը և այն իրականացնելու համար անհրաժեշտ

ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև այլ աղբյուրներից հաստատապես ստացվելիք եկամուտները և ընթացիկ տարվա ակնկալվող խնայողությունները: Գործունեության տարեկան ծրագրիևծախսերի նախահաշվի ձևավորման կարգը սահմանում է Ընդհանուր ժողովը:

9.2. Միության գործունեության տարեկան ծրագիրը և ծախսերի նախահաշիվը պետք է ներկայացվեն աշնանային Ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանը: Ելնելով իր կողմից հաստատված Գործունեության տարեկան ծրագրից, դրա իրականացման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի և ծախսերի ֆինանսավորման առկա այլ աղբյուրների տարբերությունից՝ Ընդհանուր ժողովը սահմանում է նաև գալիք տարվա ամսական անդամավճարի չափը՝ անհրաժեշտ դրամական միջոցները այդ պահին անդամագրված Միության անդամների միջև հավասարաչափ բաշխելու միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Ընդհանուր ժողովի որոշմամբ:

10. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

10.1. Միության վերակազմակերպումն իրականացվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Միությունը համարվում է վերակազմակերպված օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

10.2. Միությունը այլ միության հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, նրանցից մեկը վերակազմակերպված է համարվում միացած մյուս միության գործունեության դադարեցման մասին պետական գրանցում կատարելու պահից:

10.3. Միության լուծարումը հանգեցնում է դրա գործունեության դադարեցմանը՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Միությունը կարող է լուծարվել Ընդհանուր ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում:

10.4. Միության անդամների ընդհանուր ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողովևօրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

10.5. Միության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով և հերթականությամբ:

10.6. Միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակներին՝ Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ձևով և կարգով, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

* * *